



ՌՅԺԴ. 1863 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ. — ՀՈԿՏԵՄԲԵՐ

Վ Ա Հ Ա Ն Գ Ո Ղ Թ Ն Ա Յ Ի

(Տես էրես 277 :)

Զ. Անկէ ետե վահան դարձուց ձին դէպ 'ի հարաւ, տղայութեան ատեն զերութեան դացած ճամբէն երթալու իր վախճանին : Նոյն օրերը Մրուան ու տիկանն Աշոտոյ պատրկի օգնութեամբ խաղրաց յաղթելով 'ի Դարբանտ՝ շատ աւարով դարձեր էր յԱղուանս, և անկէ աւարին և հեծելազօրաց մէկ մասը կու դարձնէր առ ամիրապետն . ասոնց հետ խառնուեցաւ վահան . և ճամբան քիչ քիչ իմացուց անոնց իր ինչ մտքի վրայ ըլլալն . համարձակ կու խօսէր իր կրօնից վրայ և կու վիճէր անոնց հետ . որք ոչ այնչափ իր քրիստոնէական գիտութեանը վրայ կու զարմանային, որչափ իրենց մահմետական գեներն և զրոյցները տեղն 'ի տեղը գիտնալուն վրայ, և չէին կրնար դէմ դնել : Այսպէս կտրեցին այն երկայն և անապատ ճամբան : — Ի՞նչ տարբեր մտա-

ծութեամբք ելեր էր վահան այն ճամբէն՝ տեսնելու իր երկրին ընդարձակ աւերակները, և անոնց մէջ մէկ հատիկ բուսած կենդանի ծաղիկը, — իր քոյրը . — զոր հիմայ ուրիշ ծաղկան մը հետ թողլով իսպառ՝ կու դառնար ամենազարմանալի և գերահրաշ սիրելոյ մը հետ արեամբ միաւորելու : . . .

Հասան յՈւռհայ, Հայոց և բովանդակ քրիստոնէայ Միջագետաց՝ նշաւաւոր քաղաքը, նախահաւատ թագաւորին Աբգարու մայրաքաղաքը . որ յայտնի է քեզ, Հայկակ, թէ ինչպէս անոր օրերէն մինչև այս պատմութեանս ժամանակ և դեռ անկէ ետե այլ՝ քրիստոնէից անուանի ուխտատեղեաց մէկն էր, 'ի պատճառս հռչակեալ Դաւաթառակին, փրկչական պատկերին : Ահա դարձեալ վահանայ սիրելի իջեվան և հոգեւոր զբօսարան մը . ուր ոչ միայն կե-

յաւ յերկրապագութիւն այն հրաշանկար պատկերին, այլ կ'երևի թէ և երկայն ատեն կեցաւ. և ոչ պարզապէս աղօթիւք, այլ և նոր տեսեամբ կամ յայտնութեամբ մը քաջալերեցաւ իր առաջադրութեանը վրայ, միանգամայն աւոր յաջողելուն: Նոր եռանդեամբ ճամբու ընկաւ, ուղղակի 'ի հարաւ իջնելով: Ուռհայէն քանի մ'օթեան վար ճամբան կու բերէ 'ի խառան քաղաք անուանի. ուր, ինչպէս 'ի սկզբանն յիշեցի՝ վախճանեցաւ երանելի կաթողիկոսն Սահակ, որոյ յիշատակն անշուշտ գեռ կենդանի գտաւ վահան. բայց անկէ աւելի փնտռեց ուրիշ իրեն մերձագոյն խոստովանողի և վկայի մը հանգստարանը. իրմէ փափուկ մէկի մը, որոյ յիշատակն այլ արժան էր գրտնել և հուշակել տեղեկօրէն. և էր նա Շուշան, դուստր մեծ և խոհեմ իշխանին վահանայ կամսարականի, քոյր Ներսեսի պատրկի, որ Սմբատայ հետ միաբանելուն համար՝ կրակին տարին ուրիշ քանի մը իշխանաց հետ գերի բերուեցաւ, քոյրն այլ հետը. որ և հոս բանտին և բանտողաց բռնութենէն նեղուելով և հաւատքին վրայ հաստատուն կենալով՝ վկայօրէն վախճանեցաւ (706-7). միւս եղբայրն Գագիկ՝ որ նորաչէն եկեղեցւոյ մը նաւակատիք կ'ընէր ('ի վարդանակերտ), երանելի քրոջը յիշատակն այլ մէկտեղ կատարեց: Իր գերեկից Շուշանկան շիրմին վրայ այլ լալով՝ վահան ելաւ հասաւ 'ի Ռակկա կամ 'ի Կալինիկոն քաղաք, ուսկից կ'անցնէր Եփրատ գետը. և անով դուրս ելաւ 'ի Միջագետաց և մտաւ 'ի բուն սահմանս Արաբացւոց և հին Ասորոց. և լսելով որ ամիրապետն Հէշամ չէ 'ի Գամասկոս, այլ հոն մօտ Եփրատայ՝ 'ի Ռուծափ քաղաք, իր ճամբորդութեան վախճանին հասաւ, թէ և ոչ շուտով նաև իր փափագանայ:

Աներկիւղ և եռանդուն քրիստոնեայ, միանգամայն և փափագող մարտիրոսութեան, զոր և յայտնութեամբ այլ ստուգեր էր. 'ի վերայ այսր ամենայնի մեծահաւատ և խոհեմ, չուղեց կերպով

մը զԱստուած փորձել, կերպով մ'այլ անհաւատարիմ երևիլ անոնց՝ որ յետ Աստուծոյ իրաւունք ունէին իր սրտին վրայ. այնպիսի առաքինութիւն և սրբտապընդութիւն մը ցըցուց՝ որոյ նման թերեւ չատ դժար է գտնելն: Տասը տարի պատրաստուած և աչք առած էր վկայական մահը, անոր համար զաշխարհ ոտքի տակ դրած, և այնքան հաւրիւրաւոր մղոններով երկայն ճամբաներ կտրելով՝ հասեր էր հանդիսին տեղը. ոչ կու վախէր, ոչ այլ կու յանդգնէր. ոչ ետք կենար յասպարիզէն՝ որ յետք չմնայ 'ի պսակէն, և ոչ այլ ինքնայարձակ կու նետուէր. թէ և զլիաւոր փափագն էր մարտիրոսութեամբ ելնել յաշխարհէս, զոր արդէն ուրացեր էր ճգնողական կենօրն. բայց եթէ ամիրապետն հաւանելու ըլլար (որ չէր յուսալի) թողուլ զինքն ազատ իր քրիստոնէութեան մէջ, ինչպէս Օմար թողուց ուրիշ գերեալները, պիտի առնուր յանձն ապրելու ազատօրէն սուրբ հաւատովն՝ ինչպէս ուրիշ իշխանազունք հայրենեացը, և ոչ ո՞ր և է կերպով զրգռել զայլադեհս, և բռնի յափըշտակել զպսակը: Այս է զարմանալի առաքինութիւն և հաւատարմութիւն Գողթնեաց իշխանին և Սիւնեաց փեսային. այս է վահանայ կատարեալ իմաստութիւնն՝ երկնաւոր և երկրաւոր, զոր և ոչ ամեն լաւ անձինք կրցան և կրնան միացնել, այլ որոց պարգևեն աստուածային գերագոյն շնորհքն: Արժան և հարկաւոր է ճանաչելն զայս 'ի վահան, իր մեծ արժէքը լաւ ճանաչելու համար:

Աւելի քիչ ժամանակի մէջ Այրարատայ լեռներէն մինչև Ասորեստանի անապատը և 'ի Ռուծափ հասաւ վահան, քան այս քաղքիս դռնէն մինչև անոր արքունեաց դուռը: Քաղքէն դուրս տեղ մը իջևանեցաւ, իբրև թէ իր վերջին հանդիսին պատրաստուելու՝ զգաստութեամբ և հանդարտութեամբ. չուղեց անկէ ետև քովը պահել իր ճամբու հաւատարիմ ընկերները, այն երիտասարդ եղբայրները՝ զոր հալքն Յով-

Հաննաւանից և Երաշխաւորին՝ իրեն ուղեկից և օգնական տուեր էին. « Ահա, արդիկ հոս իմ ճամբաս վերջացաւ, ըսաւ, ասկէ ետեւ ուրիշ անկոխ և անթոշակ ճամբայ մ'ունիմ ընելու, զոր և մինակ պիտի կատարեմ. դուք դարձիք ձեր առաջնորդաց քով, և յանձնեցէք սուրբ միաբանից՝ որ աղօթեն երբեմն իրենց եղբայրացեալ վահանայ համար. շուտով գնացէք, որ աղօթքնին հասնի ինծի յօգնութիւն »։ Զանոնք արտասուելով և համբուրով ճամբայ դրաւ, վերջին անգամ ետևնուն նայելով դէպ 'ի հիւսիս, դէպ 'ի հայրենիս, դէպ 'ի Հայս, ուսկից շարժուն ճամբու և ճամբորդի պէս կու տեսնէր Եփրատայ իջուածքը. և երբ ասոր ափանց մօտ անհետացան տրտմեալ վանականքն, վահան այլ դարձաւ իր առանձնարանը, և սկսաւ իր մեծ գործը։

Քննեց իմացաւ թէ ով կայ յարբուսիս 'ի Ռուծափ իր հին ճանչուոր մեծերէն, և ծածուկ իմաց տալով կանչեց։ Երբ անկարծ լուրը լսելով եկան, աւելի անկարծելի բան մը տեսան. իրենց վահապը վեհակերպ վահանացեալ, թէ և իրենց աւելի օտար երևցաւ նա, քան բարեկամացն՝ Յոր. կարծեցին թէ կամ խելագարեր է, կամ բռնութեամբ այս խեղճ կերպարանքն առեր է. և եթէ իր խօսքը իր կերպերը չյիշէին՝ չէին կրնար հաւատալ թէ այն արքայակերպ պճնապայծառ պատանին՝ այս գծծակերպ նիհարացեալ մարդըն է. և դեռ զարմանալով կու հարցընէին. « Զի այդպէս ես »։ — վահան շտկէ շիտակ իմացուց անոնց թէ քրիստոսի հաւատոց և սիրոյն համար յանձն առեր է այս աղքատութիւնը և չարակրութիւնը։ — Անոնք կամ չկրնալով կամ չուզելով հասկընալ, առաւել փաստ ու պատճառ մը կու սեպէին զայն նորէն մահմետական կրօնքին դառնալու, որ թէ այս աշխարհիս թէ այն աշխարհին մէջ կու խոստանար ընդունողացը՝ հեշտութիւն և փափկութիւն։ Այն ատեն Սուրբն քիչ մ'աւելի սաստիկ լսեցուց ճշմարտութեան քարոզու-

թիւնը, և անոնց զաղփաղփուն փաստերը փլուց։ Անոնք կէս ապշած կէս ամրացած, և ոմանք իրենց կրօնքին վրայ գայթակղած, ինչպէս կ'ըսէ պատմիչն, մէկդի գացին, ոչ պաշտպանելով և ոչ այլ դատապարտելով զնա։

վահան սպասեց, և երբ տեսաւ որ անոնք կէս բարեկամութեամբ կէս անհոգութեամբ թողուցին զինքը և չիմացուցին ամիրապետին, գնաց իր ծերունի տաճկութեան վարպետին, որ և մեծ դպրապետ էր տէրութեան, և իմացուց թէ ինչպէս անոր սովրեցուցած կրօնքը թողլով իր ծննդեան կրօնքը նորէն ընդուներ է, և կ'ուզէ որ ամիրապետն այլ գիտնայ զայս։ Դպրապետն որչափ այլ զարմացաւ և ցաւեցաւ, դեռ սիրելով իր աննման աշկերտը՝ սկսաւ յանդիմանել և վախցընել ամիրապետին կողմանէ, որ փոխանակ առաջին շնորհացը՝ կրնար չարաչար մահուամբ սպաննել զնա. բայց տեսնելով որ վահանայ հաճելի և փափագելի են այս սպառնալիքս, սկսաւ անուշութեամբ աղաչել որ իր տղայութեան ատենին պէս նորէն իրեն ընկեր և օգնական ըլլայ, և իր վայելուչ հագուստներով վարդարուի. և այնքան ծանրութեամբ ու նազելով աղաչեց և երդուընցուց զվահան իր մտերմութեանը վրայ, որ բրունադատեց զսուրբը առնլու իրմէ 30 դահեկան. առաւ նա ստակը՝ խոստմանն համար, բայց նոյն տուողին առջև բաժնեց աղքատաց. և ինքն իր առանձնութեան տեղը քաշուելով՝ բոլոր ձմեռը մէկ ճգնաւորական թեթև զգեստով և գրեթէ անկերակուր անցուց։

Նոր դարուն մ'այլ հասաւ. վահան աւելի քան զընութեան կեանքը գերագոյն կենաց բաղձալով՝ երրորդ փորձ մ'այլ փորձեց իմաց տալու ամիրապետին. և այս անգամ գնաց առ մեծ պաշտօնեայն եղիւմտի (հարկաց) տէրութեանն, և նոյն աղաչանքն ըրաւ։ Արաքսցուց արքունիքն այն ատեն բաւական կրթութեան հասեր և արժանաւոր անձինք ունէր, որք առանց կրօնամոլութեան կրնային լսել և տեսնել

ուրիշ կրօնի հետևողներ, և զթոյ ու բարեկամութեան օրէնքները հաւատարմութեամբ պահէին: Այսպիսի էր այս պաշտօնեայ այլ. խոթողեցաւ վահանայ ըսածին վրայ, և աւելի կ'ուզէր չլսած ըլլալ. մատնել զնա՝ վատութիւն սեպէր, լռել՝ իրեն խիղճ մը կարծէր. և իբր թէ վահանէն աւելի ինքն իր գլխուն վրայ վախնալով՝ ստիպեց որ երթայ հեռանայ իրմէ, լռէ այդպիսի խօսքէ, զոր գրեթէ ոչ ոք համարձակի ամիրապետին ըսելու. « զի » մահաբեր է բանդ այդ. ինձ խռովու » թիւն, և քեզ մահ . . . սուր՝ ի քո մար » մինդ, մի գուցէ և յայլոց զարթու » ցանկեցես ». այսինքն, այդ խօսքդ մահաբեր սուր մ'է, որ ոչ միայն քու զըլուխդ կու տանի, այլ կարելի է քու պատճառաւդ՝ ուրիշներուն այլ: Վիպառանն՝ այս զարմանալի ընդդիմութիւնը կամ չմատնեն զվահան՝ ուրիշ կերպով չիկրնար բացատրել, բայց սատանայի խորամանկութեան տալով, որ ի խորհուրդ կու կանչէ իր գեները, և իրենց շահաւոր կու գտնեն հեռացընելու ըզմահ ի վահանայ, և ջանալու մոլորութեամբ և հեշտութեամբ տկարացընել զնա. բայց ինչպէս որ ճշմարտութեան ատեցողն և հայրն ստութեանց միշտ կոյր և կաղ է, այս փորձերովս այլ աւելի խայտառակեցաւ. վասն զի վահան թէ և փափագող՝ այլ ոչ այնքան մահուան փափագող էր, որքան ատեցող հեշտութեան և անքրիստոնեայ կրօնից. ուրեմն հակառակորդն հոգւոց ինքն իրեն դէմ կու ջանար և կու զրկուէր: Իսկ վահան՝ օրինակաւ իմն իր Տիրոջ պէս իրեք անգամ յաղթելով չարին փորձութեան, որ ի ձեռն դպրապետին, հարկապետին և արքունի խորհրդականաց՝ կ'առաջարկէր անոր զփափկութիւն կենաց, զհարստութիւն և զաշխարհական փառք ու պատիւ, չորրորդ փորձով մ'այլ խայտառակեց զնա՝ վերջապէս իր փափագած մահը յափշտակելով, թէ և զայս այլ ոչ անաշխատ: — Պաշտօնէից սիրտը շատ կիրթ և կակուղ գտնելով վահան,

պէտք ունեցաւ խիստ և անգութ սրտի մը. բոլորովին հակառակն ընելով բնական բերմանց. և իրեն մէկ հատիկ յարմար պաշտօնեայ սեպեց զայն՝ յորմէ ամենայն զգայուն սիրտ սոսկայ և զզուի, երկաթէ և քարէ զանգեալ սրտի տէր կարծելով զնա. պաշտօնեայ մը՝ որ լոյս ատեն չերևիր, այլ գիշերահաւու պէս կու պահուրտի, և այն վայրկենին կ'երևի՝ երբ ուրիշի մը վերջին վայրկեան պիտի բերէ. կարծես թէ ամեն իր դուրս գալուն՝ ցրտագին սարսուռ մը կու զարնէ զինքը ճանչցողներուն, և գոնէ մէկ մը սառուցեալ գունատեալ անչնչացեալ կու մնայ, կամ կապուտակ մահուն մանեակը վիզը պլլուած, կամ մարմնոյն և գլխոյն կարևոր կամուրջը կտաւրած . . . Դա է դժնիկ դահիճն:

Իսկ վահանայ փնտռած և ընտրածն ոչ թէ պարզ դահիճ, այլ և Դահլաւ պետ էր, իրեն յարմար ֆալշ անուամբ որ ի վարձ պնդասրտութեանն և շատ անգամ՝ պժգալի պաշտօնը վարելուն՝ հիմայ Հիմացուց (Հեմսի) իշխան զըրուեր էր: Յետ երկար աղօթքով ինք զինքը Աստուծոյ յանձնելու, վահան իր հաւատքը, կամքը և փափագը, միով բանիւ իր խնդիրը՝ աղերսագրի պէս գրելով վայելչապէս արաբացի ճարտարգրութեամբ, զոր ի տղայուց լաւ վարժեր գիտէր, գնաց այս փշոտ պաշտօնէին, և առջիններուն պէս իմացուց միտքը, ու տուաւ խնդրագիրն այլ որ ցուցընէ ամիրապետին: — Քարշ՝ դժընդակ շարժուածքով մը աչքերը խլուռեց, պերեշտքն ոլորեց. կարծես թէ քաղցած դայլու կամ բզրքտող յովազի պէս՝ արեան հոտ մ'առաւ, լեզուն հին սպանութեան համերը զգաց, և լափլըփելով չրթանց մէջ, լաւ լաւ՝ ըսաւ. խնդրագիրը ծոցը դրաւ, փաթթոցը պնդեց, ակնարկեց վահանայ որ հետը ճամբայ ընկնի. և ահա հեզ ու անմըռունչ գառին պէս քշելով կու տանէր առ մեծ խալիֆայն. իր ձախ ու ժանտ դէմքը տեսողք և ճանչցողք՝ սոսկալով ետ քաշուէին, բայց վահանայ ագնիւ և ուղորմ կերպարանքն՝ ոտուրնին կապէր:...

Տեսնուեցան ֆարշ և Հէշամ. դահճապետն և ամիրապետն. սա առաւ՝ կարդաց վահանայ խնդիրը, և նախ գրոյն վայելութեանը և գրուածքին ու խօսից ճարտարութեանը վրայ զմայլեցաւ, և աւելի դառին քան գայլուն կողմը դարձաւ սիրտն. հրամեց որ առջևը բերեն զվահան, որ այնքան երկայն ատեն և տարիով սպասէր այս կոչման: Ահաւոր բռնաւորին սիրտն չդիմացաւ այն անշուք զգեստուց և մաշեալ կերպարանաց մէջ տեսնելով իր արքունեաց հին զիւանադպիրը. ինչո՞ւ, ըսաւ, այդպէս խեղճացեր ես, վահապ. « ուրեմն » երկիրն Հայոց իջոյց գրեզ յայդ »: — Ոչ իմ հայրենիքս, պատասխանեց վահան, այլ իմ հարցս հաւատքն ճանչցուց ինծի իմ գերագոյն Տէրա, որ իր անբաւ մեծութենէն իջաւ այս խեղճութեան. որուն ես այլ իմ չափովս նմանել ուզեցի: — Տեսա՞ր, կանչեց ամիրապետն, որ Հայաստանի սառնապատ սարերուն սատանաներն գրեզ խենդեցուցեր են: — Մանաւանդ թէ, ըսաւ վահան անվախ զուարթութեամբ մը, տղայութեանս ատեն վրաս եկածներն այլ՝ հոն թօթուեցի, մաքրուեցայ պայծառացայ: . . .

Անշուշտ ֆարշի փուշերն տնկուեցան այս խօսքերուս, և կ'ուզէր մէկէն լափել վահանայ արիւնը, եթէ քան զինքն երկայնամիտ և կակղասիրտ չըլլար Հէշամ, որ և նեղանալով և հայհոյելով, բայց դեռ ողորմելով, լռէ ըսաւ, ո՞վ միտրեալ և բարիատեաց, այդ խենդ խօսքերէդ, որ ձեր սատանաներն միտքդ մոռցեր են, և դարձիր քու առջի փառացդ և կրօնից: Հրաման տուաւ, և մէկէն բերին վահանայ՝ գունադոյն մետաքսեայ բանուած հագուստներ, և զի մացը թափեցին ոսկւոյ և արծաթի զարդուց գանձեր. « Ատոնց վրայ, աւելցուց ամիրապետն, պատրաստ են քեզի համար ընտիր ձիան և ուղտեր, ամեն տեսակ ըռզակ, ծառայք ու աղախնայք, և քեզի արժանաւոր իշխանութիւն մ'այլ, եթէ կ'ուզես հոս իմ քովս, և թէ ուզես հոն՝ քու հայրենի գաւառիդ մէջ. « Եւ իշխանութիւն քեզ թէ պէտ աստ, թէպէտ 'ի Գողթան. դրոանկաւոր իշխանութիւնն ». միայն թէ մեր պատգամաւորին պատուէրը կատարէ, և վայելէ իր խոստացեալ բարիքը՝ թէ հոս թէ 'ի դրախտին»: — Այսպիսի խօսքով և գործով մը ամիրապետն գրեթէ մէկէն լմանցուց իր ըսելիք և ընելիքը. հարկ էր որ վահան այլ իր վերջի խօսքն ըսէ. և ըսաւ համարձակ՝ իբրեւ հասարակ մարդու մը. ըսաւ, թէ « Այդ գանձերդ և խոստմունքդ լաւ իսկ վկայ կ'ըլլան քու խորագիտութեանդ, որով շատերը խաբեր ես. բայց Աստուծով՝ ես ոչ պարզեմերէդ և ոչ պատիժներէդ պիտի խաբուիմ. եթէ իրաւ ինծի բարիք ընել կ'ուզես, թող զիս ազատ՝ գիտցածս և ուզածս ընելու, և ընծաներդ ուրիշի պահէ. կ'ուզես ան և իմ հայրենի Գողթան իշխանութիւնս այլ, որ թէ ոչ դու՝ ստուգիւ մահն քիչ ատենէն ինծմէ պիտի առնու, ինչպէս քեզմէ այլ քու իշխանութիւնդ. . . ապա թէ ասոր չես հաւանիր, կատարէ վրաս սպառնալիքդ, ես պատրաստ եմ »:

Այլ խօսել չէր ըլլար. հրամեց ամիրապետն որ տանին զվահան 'ի բանտ և ոտքը չղթայի անցընեն: Երբոր տարին՝ նա ուրախութեամբ փոխանակ մէկին՝ աղաչեց որ երկու ոտքն այլ դնեն 'ի կոճեղս. ասանկ այլ ուրիշ առիթներու մէջ՝ որչափ որ դիւրութիւն կրնար ըլլար 'ի բանտին, կամ բանտապետն կ'ուզէր շնորհել, նա կու մերժէր, և աւելի չարչարուիլ կ'ընտրէր. որոյ վրայ զարմանալով կ'ափշէին պահապանքն. և երբ վերջին օրը վահան շնորհակալ ըլլալով՝ կ'ըսէր բանտապետին, թէ ասկէ ետեւ պիտի ազատիս իմ վրաս աշխատութենէդ, նա գրեթէ ամբշնալով և տրտմելով պատասխանեց, թէ ի՞նչ բանի վրայ կրնաս շնորհակալ ըլլալ՝ որ և ոչ մէկ շնորհք կամ դիւրութիւն մը յանձն առիր ինծմէ: Իսկ առաքինի վկայն՝ անոր զթասիրութիւնն այլ մեծ բարերարութիւն սեպելով՝ դարձեալ կ'ըսէր թէ այդոր համար վարձքդ կ'առն

նուս յԱստուծոյ, որովհետեւ անկարելի է որ հատուցանեմ ես :

Ութ օր մնաց 'ի բանտը . այն միջոցին Հէշամ արագընթաց ձիերով մարդ զրկեց 'ի Միջագետս առ Մրուան ոստիկանն Հայոց, վահանայ վրայ տեղեկութիւն առնելու թէ ի՞նչ բրած է 'ի Հայաստան . մէկայլ կողմանէ այլ ամեն օր զիտուն կուռաներ և զենպետներ կուխաւրէր 'ի բանտն, որ վիճեն և համոզեն և նորէն զվահան ընեն վահապ . իսկ անոնք չրթունքնին խածնելով յետ կուղառնային, և կուխոստովանէին որ նա մեր դիտցածը մեզմէ աւելի դիտէ . իսկ իր քովէն ըսածը՝ խօսք չէ, սուր է, դէմ կենալ չըլլար . « Չէ ու » մեք լսել բան, բայց սուր՝ որ զբանից » մերկանայ զխօսս » : Ամիրապետն չէր դիտեր նեղանայ թէ զարմանայ . և կ'ապրսպրէր որ չըլլայ թէ ուրիշի այլ իմացընեն իրենց խաղբութիւնը :— Գարձան շուտով դեսպաններն և Մրուանայ պատասխանը բերին, որ ստուգեր էր հաւատարիմ՝ անձերէ, թէ վահան իրաւ մեծատոհմ իշխան մ'էր 'ի Հայս, միանգամայն խելացի և զգաստ մարդ մը . ոչ հիւանդ և ոչ խելագար, այլ իր հայրենիքէն ելեր եկեր էր, որ ամիրապետէն հաւանութիւն առնու կամհամարձակ իր հաւատքը պաշտելու և կամ անոր վրայ մեռնելու :

Այս բանս այլ աւելի հաստատեց Հէշմայ փորձը, և աւելի փափագեցաւ տպրեցընելու այնպիսի անձ մը՝ զոր Օմար հազիւ կրցեր էր քովէն հեռացընել . և նորէն կանչելով զվահան և աւելի կակըղցած սեպելով, հարցուց թէ միտքը փոխեց : իսկ նա պատասխանեց, թէ ճշմարտութիւնն մէկ է, իր խօսքն այլ մէկ է : Եւ յետ երկար և կրկին կրկին փորձելու և ջանալու համոզել զնա ամեն կերպ զիջողութեամբ, տեսնելով որ վահանայ ամեն մէկ պատասխանն իրեն յանդիմանութիւն և իրեն ներուն ամթի կու բերէ, — որք և կուղժուարէին լսելու, և նշաններով կ'իմացընէին որ այլ պէտք չէ ներել իրենց կրօնից նախատանայ, — Հէշամ

այլ երեսին գոյնը և խօսքերը փոխեց, մատնեց զվահան արիւնկզակ դահճապետին ձեռքը : — Բայց ինչուան ետքն այլ չկարցաւ բոլորովին մարել գութը այնպիսի ընտիր և անպարտ դատապարտելոյ մը վրայէն . . . ծածուկ բան մ'այլ ըսաւ սպանչին ականջէն : . . .

Ի . Ոչ այնչափ մեծ ուրախութեամբ ելեր էր վահան Օմարայ առջևէն դիմելու 'ի Գողթն և 'ի հայրենիսն, որչափ Հէշմայ ատենէն ելաւ դիմելու 'ի բուն հայրենիս հողւոյն և յանկորուստ իշխանութիւնն . և որչափ այլ ամիրապետին բռնած կերպն կրնար դեռ մահւնէ աղատելու յոյս մը տալ, ինքն իբր ապահով մարտիրոսութեանը վրայ՝ ութօրեայ բանտարկութեանը մէջ վերջին պատրաստութիւններն այլ տեսեր էր . որուն ջերմեռանդութիւնն այլ լսելով Ռուժափայ Յակոբիկ երէցն՝ եկեր էր 'ի բանտը՝ բարեսիրութեամբ մխիթարելու զնա, և յորդորելու եկեղեցւոյ սուրբ խորհուրդներն ընդունելու, որոց շատ փափագէր սուրբն այլ . սակայն տարակուսելով երիցուն հաւատոց դաւանութեանը վրայ ամենազգաստ վկայն՝ ըսեր էր . « Իմ արեամբս » մկրտեցայց, վերջին բաժակաւս ելից » յաշխարհէս » : Բանտին վերջի օրն այլ մեծախորհուրդ օրհնեալ օրն էր, այսինքն ծաղկազարդի օրն . յորում ինքն այլ սիրով և փառաբանութեամբ յուղարկէր զտէրն 'յերուսաղէմ, « ընդ տղայսն օրհնաբանելով » և ընդ ծերսն « բարեբանելով զանմահ թագաւորն », լուսածաղիկ ձիթենեօք սիրոյ և պսակափայլ արմաւենեօք հաւատոց . և փափագէր որ Տէրն այլ զինքը մոցընէ իր երկնաւոր արքունիքը : Եւ ահա իբրեւ շուտ մը խնդրանացը հասնելով՝ կ'երթար զուարթութեամբ իր ցաւոց ճամբան . կ'ենէր իր Փրկչին նման (Ռուժափ) քաղքէն դուրս, փոխանակ իր գինաւէտ Գողթան՝ գտնելու զարիւնակաթ Գողգոթայն . և երթալուն ատեն՝ Առ քեզ, Տէր, համբարձի զաչս իմ, սաղմոսը և անոր նմանները՝ բարձրաձայն կ'ըսէր . մինչդեռ դահիճքն քովէն

կ'երթային խաչահանուաց և աւագա-
կաց պէս, և Ռուծափայ մէջ գտուած
քրիստոնէից բազմութիւնն՝ ետեւէն և
հեռուէն. միայն լալերնուն և վայեր-
նուն ձայնն կու հասնէր և խառնուէր
սրբոյն աղօթից հետ. որ այլ աւելի ու-
րախութեամբ և համարձակ սկսաւ գո-
հանալ և օրհնել զԱստուած՝ երբոր հա-
սաւ վկայութեան տեղը, երբոր վեր-
ջին երկրաւոր քայլն այլ առաւ. և ար-
դէն մարմինն իբր իր յետին հանգիս-
տը գտնելով՝ դադրեցաւ առաջ երթա-
լէն: Իսկ դահճապետն որ անդադար
մըմուտով՝ մէկ մը կու սպառնար, մէկ
մը կու յորդորէր զնա յուրացութիւն,
ըստ պատուիրանին Հէշմայ, հոս այլ
աւելի ահարկու կերպով, միանգամայն
և կենակտուր սուրը երեցընելով՝ ըսաւ.
Որովհետեւ մտիկ չըրիր յորդորանացս,
ես այլ ամիրապետին հրամանը պիտի
կատարեմ: — Ուրեմն ինչուան հիմայ
անոր հրամանին դէմ կ'ընէիր, պա-
տասխանեց սուրբն. Իսկ ես իմ երկնա-
ւոր թագաւորիս պատուիրանաց վրայ
անփոփոխ և հաստատ եմ: — Սակայն
հոս դահճապետն այլ իր խալիֆային
հրամանը կու կատարէր, գուցէ չուզե-
լով այլ, բայց վախնալով անկէ. որուն
ծածուկ պատուիրածն այլ հոս կա-
տարեց. . . ծայրէ 'ի ծայր սուրը փայ-
լեցընելով և դարձընելով՝ իջուց քը-
սեց սահեցուց ծոծրակին վրայ. և նո-
րէն փայլատակի պէս վահանայ աչաց
առջև բերաւ. . . և ահա ծարուած երկա-
թոյն չրթունքն կարմրցեր էին իր քանի
մը կաթիլ արեամբն, և ուրիշ կաթիլ-
ներ այլ վզին վրայ մանեակ մը կու
ձեացընէին. . . Գողթան գինին այնքան
չէր անուշ եկած իր չրթանցն՝ ինչպէս
այս ինքնաբուխ օշարակն, զոր իբրեւ
նախընծայ նուէր մարտիրոսութեանն
կրցաւ ինքնին մատուցանել Աստուծոյ,
և իր օրով առաջ ըսածը կատարել.
« վերջին բաժակաւս ելից յաշխար-
հէս » . . . Ո՛վ սխրալի, այլ և սոսկալի
բաժակ: —

Դահճապետն դարձեալ մէկ մը ա-
միրապետին պատուէրէն վախնալով,

մէկ մ'արեան ցայտմունքէն գրգռուե-
լով, Տեսար, կանչեց. ուրեմն ինչ կ'ու-
զես: — Վահան այլ կտրուկ կերպով
ըսաւ, Կատարէ կամքդ. և լռեց. և թէ-
պէտ քանի մը բան այլ զրուցեց դա-
հիճն, ինքը պատասխան չտուաւ. ին-
չուան որ նա մէկ անգամ մ'այլ կըրկ-
նեց, թէ ահա վերջին վայրկեան մ'այլ
քեզի, ո՛վ տառապեալ, ընտրէ զկեանք
կամ զմահ: — « Ընտրեցի, կանչեց
վահան, զմահ՝ վասն ֆրիստոսի, քան
զկեանս անցաւոր »: — Ուրեմն երկըն-
ցուր վիզդ, պուաց յուսահատեալ դահ-
ճապետն. և դարձեալ փայլատական
երագութեամբ իր և սրոյն պաշտօնը
կատարելով, մէկէն դիւահարի պէս
ցատքեց ելաւ գնաց: . . .

Աւագ երկուշաբաթի օրը՝ միջօրէէն
քանի մը ժամ ետեւ (ժամն իննին, յո-
րումն Յիսուս զհոգին աւանդեց) մարտի
18^ն յամին 738, և իր ծաղկեալ առոյգ
կենաց 36 տարւոյն մէջ՝ կատարուեր էր
մեր Հայաստանեայց և ընդհանուր սուրբ
եկեղեցւոյ մեծայաղթ և մեծափառ վը-
կայից մէկուն հանդէսը. պանչելի և
պանծալի մարտիրոսութիւն վահանայ
Գողթնեաց իշխանի: . . .

Մոսկովմ և սարսուռ դեռ պատէր զմօ-
տաւորս, որք էին ամիրապետին ար-
քունիքէն եկած պատուաւոր մարդիկ.
տեսան և վկայեցին որ վահանայ ա-
րիւնն չէր տարածուէր չորս դի, այլ
ամիոփուելով մէկտեղ կու ժողովէր. և
բոլոր մարմինն լուսոյ մէջ ընկղմած կ'ե-
րէր. Աստուած, Աստուած՝ կանչելով
իրենց լեզուով, և զարմացըով յետ դար-
ձան պատմելու ամիրապետին, որ չկըր-
ցաւ չտխրիլ. և ոչ ոք ուրիշ կիրք մ'ու-
նեցաւ, բայց 'ի մեծահաւատ քրիստո-
նէից՝ 'ի պարծանս եկեղեցւոյ: Բոլոր
գիշերը մարմինն հոն մնաց. շունք և գա-
զանք հեռուէն պահապանի պէս կե-
նային և զիրար վռնտէին. քրիստո-
նեայք փափագանք և վախով արթուն
սպասէին. երկրորդ օրն բոլոր քաղաքն
և արքունիք իբրեւ իրենց սիրելի ան-
դրանիկը կորուսած տագնապէին. կամ
կլիմայն փոխուած անսովոր ցրտութիւն

մը հասած կարծուէր, կամ ամենքն այլ իրարու յանցաւոր և խղճահար կ'երեւէին: Ինչուան որ ելաւ արքունի ներքինապետն և մունետիկ կանչել տուաւ քաղերն մէջ՝ որ քրիստոնեայք առնուն թաղեն նահատակը. և երբ անոնք տարակուսէին թէ խաբէութիւն չըլլայ՝ նորէն վստահացուց, թէ վերուցէք անվախ և ինչ կ'ուզէք՝ բռնէք: . . . Մէկէն հոն թափեցան բոլոր քրիստոնեայք, և իրարմէ խլելով յափշտակեցին առին բաժնեցին սրբոյն բոլոր արիւնը և տակի հողը, զգեստները, և ինչ որ անոր դպեր էր: Իսկ մարմնոյն ոչ ոք կու համարձակէր, զպչելու. գիտէին որ անոր տէր ելլող պիտի ըլլայ. իսկ հիմայ հոն Հայ չկար, այլ միայն Ասորի նեստորական կամ Յակոբիկ, և Յոյն. ապա խորհուրդ բրին, հաւանեցան, վերուցին տարին թաղեցին Օտարաց գերեզմանատեղը, և շուտ մը քարեր տաշելով կանգնեցին վրան քառակուսի կափարիչ մը. և իրարմէ զատուելով, բայց միշտ կասկածելով՝ գնացին տեղերնին:

Այլ չերկընցընեմ խօսքս. Թէոփիլէ անուամբ Յոյն մը որ ամիրապետաց ծառայութեան մէջ էր և անոնցմէ Էպու Ստեֆան կոչուէր, չորս մարդով եկաւ հանեց մարմինը՝ տապանի մէջ դրաւ, տարաւ իր տունը. բայց նոյն գիշերը եպիսկոպոսի մը յայտնուեցաւ եղածն. և թէպէտ առջի բերան ձայն հանեցին թէ վաճառականը գողցեր և Պաալպէքի ճամբով 'ի սուրբ երկիրը տարեր են, բայց սրբոյն մարմնոյն եղած տեղը, ինչպէս նաև նահատակութեան տեղն այլօրէ օր հրաշքներ և բժշկութիւններ ըլլալով՝ իմացուեցաւ եղածն. և ստիպուեցան յայտնապէս մատուռ մը շինել վկայութեան տեղը. և դեռ չլմանցած՝ ձեռք զարկին մեծ և փառաւոր եկեղեցի մ'այլ շինելու. բայց մարմինը մատուան մէջ հանգուցին, և կու պատուէին համարձակ և հաւասար Ս. Սարգսի (ընկերին Բաքոսի), որոյ արդէն հին վկայարան և ուխտատեղի մը կար հոն, և անոր պատճառաւ Սերգիոս պօլիս այլ կ'ըսուէր Ռուծափ:

Ը. Ս. Վահանայ նահատակութենէն եօթն տարի ետեւ եկաւ իր վերջին հիւրընկալ մտերիմ և վանահայրն, Արտաւազդ, քանի մը միաբանով. ընկաւ, լացաւ համբուրեց իր յուսադրեալ սրբոյն գերեզմանը. բոլոր լսող և տեսող վկաները փնտռեց, հարցուց անոր նահատակութեանը վրայ, և առաւել տեղեկացաւ Թէոփիլէէն, որ և յունարէն գրեց տուաւ իր գիտցածը. զոր 'ի դարձին՝ հայրն Արտաւազդ Ուռհայի եպիսկոպոսին ձեռքով հայերէն թարգմանել տուաւ. յետոյ դառնալով իր տեղը՝ յաջորդ տարին (746) ձեռք զարկաւ և գեղեցիկ և երկար ոճով գրեց Վահանայ վկայաբանութիւնը, այրած սրտով մը ողբի պէս սկսանելով, և կրակի տարւոյն դէպքը կրակէ տառերով շարելով. դեռ անկէ առջի դիպուածներն այլ կարգաւ 'ի մէջ բերելով, որ ետեւի եղածին պատճառն և սկիզբն ադէկ իմացուի. և թողուց մեր պատմութեան և դպրութեան սրտառուչ և վայելուչ աւանդ մը, զոր 'ի յիշատակ Վահանայ թողուած կայծակներէն մէկն անուանեցի քեզ, Հայկակ, 'ի սկզբան խօսիցս. և որ ինչպէս հաւանական է, դեռ շատ համառօտած հասած է մեր ձեռքը. և թէպէտ հին ճառընտրաց մէջ այլ երկու տեսակ¹ գտած եմք, մէկն քան զմէկայլն կիսով չափ մ'երկայն, մանրամասն և ստուգադոյն. բայց ինձ թուի թէ սկզբնաղբին աւելի երկարապատում էր. ճառընտիրք միայն Վահանայ վկայաբանութիւնը կ'ուզեն աւանդել մեզի, իրենց համար աւելորդ են առջի պատմածներն, այն՝ որոյ համար կ'ըսէ վիպասանն իր վերջաբանին մէջ. « Սկսայ պատմադրել՝ սկիզբն առնելով » ուստի արժանն էր. 'ի նոյն յարելով » զվկայութիւն սրբոյն Վահանայ վրկային » . և թէ և մեզի հասած վրկայաբանութեան սկիզբն այլ կան կրակին պատմութիւնն և ողբքն, բայց համառօտեալ. և երկու օրինակաց խօս.

¹ Երկուքն այլ հրատարակուած է 'ի ԹԳ հատոր Սոփերաց, տպագրեալ յամի 1854 'ի Ս. Ղազար:

քերն երբեմն իրարմէ տարբեր և մէկ-մէկու լրացուցիչ կ'երևին, միանգամայն աւելի մեծ լրութիւն մը գուշակել տան: Ի վերայ այսր ամենայնի՝ անգամ մ'այլ կրկնեմ քեզ, Հայկակ, որ այս Ողբքս և Վկայաբանութիւնս՝ որոյ ընտիր ընտիր զրուցուածքը ջանացայ խառնել իմ խօսիցս մէջ, մեր մատենագրութեան և հայրենի յիշատակաց ցանկալի և պանծալի հատ մ'է, և թե բնա խորենացուոյ և եղիշէի պատմութեանց վերջաբաններէն ետե ինչուանց Արտաւազդ՝ ոչ որ այնպիսի սրտառուչ գրուած մը թողեր և հասուցեր էր մեզի. գուցէ և ոչ որ անկէ ետե այլ: — Աւելորդ է ինծի հոս քննել կամ յերկարել այս գրուածոյս յարգը, որ թերեւս ոչ մէկ ուրիշէ մը կրնայ նշուազիլ կամ հակառակիլ կամ բազդատիլ, բաց 'ի մէկ կարծիք փոքրիկ գրուածէ մը 'ի նոյն ինքն 'ի Ս. Վահան, որ և խօսքիս սկզբան ակնարկած անոր երկու կայծակնափայլ յիշատակաց մէկայլն է, հինգ տուն շարակաւն վառանայ Գողթնացոյն. ցանկալի մնացուած նախնեաց, ծնունդ չքնաղ մըտաց և սրտի, չքնաղագոյն ևս եղած աւանդութեամբն, որով պէտք է ես այլ այս երկարեալ հայրենաբանութիւնս լմանցնեմ:

Անկարելի է ինչպէս քեզի և ինծի՝ այսպէս ամեն ազգայնոյ և զգայնոյ, Սրբոյս վերջին տասն տարուան պանդրխտութիւնը և սրտակտուր մահը դիտելէն ետե, չգառնալ մէկ մ'այլ 'ի Գողթն և 'ի Սիւնիս, տեսնելու թէ ինչ կ'ընեն ինչ կ'ըլլան խոսքովիդուխտ և Սիսակուհին՝ բամբիշն Գողթան, քոյրն և ամուսինն Վահանայ: — Պատմութիւնն՝ կամ անկարող անոնց խոր և խառն սուգը բացատրելու, կամ անփոյթ՝ զխաւոր հանգիսէն վերջը մասնաւոր տեսարան մը բանալու՝ կու լռէ բոլորովին, կարդացողին թողլով գուշակել իր սրտին թելադրութեամբ: Եւ ահա մեր նախածանօթ աւանդութիւնն չի թողուր այսքան ողբերգելի և աննման վկայի մը (Վահանայ Գողթնացոյն)

յիշատակը՝ սովորական լութեան մէջ թաղել. և զիմացնիս կու ցոլացնէ այդ վերջի յիշած կայծակ (շարականը), որ ոչ Աբրահամեանն Արտաւազդայ, ոչ Յովհանու և ոչ հարանց հօր Սողովմոնի գրչէն ճայթած է, այլ ինքնայայտ է որ տարբեր սրտի և տարբեր սեռի արտագրութիւն մ'է, որուն ոչ նմանն ունիմք և ոչ նմանցընողը: Հայ Պինդար մը չէ այսոր երգիչն, այլ հայկուհի Սալփոյ մը, որ և կրնայ այս հելլենուհոյս հետ մրցիլ, և սրբազան զգացմամբն յաղթել անոր հասարակ զգացմանցն. արդէն իսկ յաղթանակած է անոր և նմանեացը՝ երբ ըսեր է. « Արտաքնոցն » զգաստքն ստեղծիչ բանք սնոտեացն » 'ի պատրութիւն. իսկ քոյր սիրայնոյ՝ » աստուածարեալ և ոգեշահ, ով երանելի Տէր Վահան »: Այս ոճով հինգ կարծ տուն բանի մէջ՝ սրբասէր սրտի և հոգւոյ սաստկագոյն կիրքը հաւասար բացատրէ, առանց մէկը մէկայլին արգելք ընելու. հոս արդարեւ Գողթան գաղտնի և նուաղեալ բամբիշն՝ իբրեւ իր զմայլեցուցիչ գինւոյն երկար թըմբութիւնը թօթափելով՝ կու մրցի և խառնուի Սիւնիսի աստուածերգակ քնարին հետ, և ասով՝ իր հնացեալ և մահալուկ ձայնը անմահ թողու յառագաստի եկեղեցոյս. Եւ ինչպէս 'ի հնումն կարմիր ծովուն հրաշալի անցքը հրաշափառապէս նկարագրող երգը, թէ և 'ի Մովսիսէ արտագրեալ, բայց իր քոյրըն՝ թմբկուհին Մարիամ էր՝ որ կուսանաց և կանանց պարագլուխ եղած կրկնելով և կրկնեբեղով՝ անլռելի ըրաւ, և հասուց ինչուան մեր սուրբ տաճարաց, « Օրհնեսցուք զՏէր, զի փառօք » է փառաւորեալ. զերիվարս և զհեծեալս ընկէց 'ի ծով » . այսպէս և հոս հայկուհի մը և քոյր մը, աւելի սրտահար քան թմբկահար և բամբուհար, Գողթնացոյն մեծ և արժանալուր դիպուածը՝ յաւերժայիշատակ ըրաւ. առաւելեալ քան զՄարիամն այն, վասն զի մերս ինքնին էր երգոյն հեղինակ: — Այս պարառաջս մերազնեայ կուսանաց և կանանց, անհամեմատ երգիչ Հայ-

կուհի, որոյ 1100 և աւելի ամաց հնութիւնն՝ կ'աւելցընէ իր վրայ յաւերժահարսնեայ շնորհք մ'այլ, եթէ չտեսաւ կարմիր և կծու ծովու մը պատառուածք, և անոր մշտաթաց ճամբէն՝ ցամաք և հետևակ անցք 600,000 մարդկան և այլ աւելի բազմութեան կանանց և մանկանց, և ոչ անոնց ետեւն սպառազէն զնդից և գերանդազէն կառաց խառն 'ի խուռն հրոսակ մը, որ յանկարծ՝ նորէն իր բիւրեղէն պարիսպները փլցընելով փրփրացեալ ծովուն ալեաց մէջ՝ ծփեցան և ծածկեցան, և պատառ պատառ նորէն կարկըտած հաւասարած ջրոց երեսը ցրուեցան. — եթէ այսպիսի ծովու անցք մը չտեսաւ կ'ըսեմ՝ մեր Հայկուհի գերազոյն գուսանն, սակայն տեսաւ 'ի տղայութեանն՝ Նախճաւանի և Հրամի հրեղէն և օգային ալիքն և համաշխարհական սղոյ արտասուաց ծովը, և անոնց միջէն մէկ մը՝ ճողոպրած իրեն Սիրայիւնը, վահան Գողթնեաց իշխեցողը, մէկ մը՝ զնոյն իր հայրենի տիրական դահուն վրայ բարձրացեալ փառօք, մէկ մ'այլ 'ի խորս անապատից և մեծ նաստանաց ճգնաւորեալ ապաշխարութեան ողբովը, և յետոյ ինքնակամ նահատակութեամբ թաթաւեալ արեանը մէջ. արիւն մը, որոյ համատարր վտակն էր զինքն իսկ (զերգիչն այլ) կենդանացնողն. հարազատ արիւն մը՝ մէկ աղբերէ յերկուս բաժանեալ, յեղբայրն՝ 'ի վկայն վահան, և 'ի քոյրն՝ 'ի վկայերգակն խոսրովիդուխտ: Սա ինքն է աւանդութեամբ վկայեալ և սրբազանեալ երգուհիս մեր. զոր թէ և նա (աւանդութիւնն) լուէր՝ հարկ էր մեզի կարծել՝ կամ՝ վահանայ անտարակոյս սիրողը, այսինքն, իրեն հարսնացեալ Սիւնեաց օրիորդը, և կամ անոնց երկուքին ժամանակակից և վկայուած մեծանուն Հայ երգուհի մ'այլ, որ քեզ այլ, Հայկակ, անծանօթ չէ, Սահակադուխտն այն՝ քոյր Ստեփանոսի Սիւնեցոյ, (որոյ եղբրական վախճանն, ինչպէս որ քեզ պատմեր եմ¹,

եղաւ վահանայ ճգնութեանց տարիներուն մէջ:)

Արդ այս վահանայ սիրայիւն նորբազդած մեղամաղձիկ մեղրամաղձիկ երգուհիս էր՝ որ անոր ամեն զիպուածներէն և գործերէն աւելի՝ կու զմայլէր կու զգայր բռնած զարմանալի ճգնող և ապաշխարող վարուցը վրայ: Ինքն որ թուի թէ 'ի բնուստ և յարուստէ վարժած՝ սիրէր զերգս և զերաժիշտս, անոնց ամեն նուագներէն աւելի զարմանալի և խորագգու կու գտնէր վահանայ ողբերն ու հառաչանքը. « Զարմանալի է ինձ քան զերգս երաժշտակա՝ » նայն՝ « ճայնս՝ ողբոց քոյ հնչմունք » : Եւ այնոր համար աւելի զարմանալի էր՝ որ երբ ուրիշ ողբական երգ կամ նուագ լսէր՝ իրեն այլ ողբերգութեան յորդոր կու գայր. իսկ վահանայ ողբերն՝ սրտէն անդին մինչև 'ի հոգին կ'անցնէին. անակնկալ կիրք մը կ'ազդէին, նորօրինակ ուրախութիւն մը, որ զինքը կու շարժէր երգախառն հրքճուանօք երգելու. « Առաւել յորդորէ այս զհոգւոյս մասունս, յօրինել » քեզ երգս ոչ զղջականս, այլ հոգւորս և ուրախարարս, յորդորականս և ներբողեանս » : — Շատ գովելի և գեղեցիկ յատկութիւններ տեսեր էր վահանայ վրայ, շատ ձիւրք, շատ վայելչութիւն, մեծօգիւթիւն և արիւթիւն, բայց անոր ըրած ճգնութիւնքն իր ծաղկեալ հասակին մէջ, և ամենեկն ազատ, կրնամ ըսել թէ և անպարտ, ճգնութիւնք՝ որ զճգնաւորս ապշեցընէին, բոլոր մարդուս բնութեան անգամ՝ զարմանք և զարհուրանք բերէին, գոնէ անանկ պայազատ և բազդայաջող մարդու մը, նա և բնութենէ վեր կ'երևէին. « Զարհուրեցուցանէ քո » ճգնութիւնդ զմարմնոյս բնութիւնն. » իսկ դու՝ առաւել գտար » : — Զասունք (վահանայ ձիւրքերը և գործերը), տեսնելով եթէ առջի բերան կու զարհուրէր երգուհին, ապա հիանայր, զմայլէր, և սիրէր. բայց սիրէր սովորական սիրոյ վեր սիրով մը. կրնար ինքն այլ իր հին հայրենի գուսանաց նման փորձ մը

փորձել, քիչ մը ճնշելով իր գինաւէտ Գողթան ըմբերանեալ բամբիւր՝ վառվռուն երեակայութեամբ և այլաբանութեամբ վիպասանել իր վեհազն սիրելին. սակայն հոս բոլոր արտաքին բանաստեղծից արուեստը և հնարք՝ սնուտի և սուտ, անօգուտ և անպիտան կ'երևէին նկատմամբ վահանայ առաքինի գործոց և իր (երգչին) զգացմանց. «Արտաքնոյն զգաստըն՝ ստեղծիչ բանք սնուտեացն՝ ի պատրուծիւն», և այլն: — Անոնց գովասանած մեծագոյն գործերն՝ շատ հեղ ինչ են, բայց եթէ դիւցազն ըստած յանդուզն և ուժով (և երբեմն մոլի) մարդու մը ըմբշամարտութիւն, կամ յափշտակութիւն կնոջ կամ քաղաքի մը, կամ մեծաբանակ պատերազմի մը յաղթութիւն, որ դաշտին մէջ անբաւ արիւն թափել կու տայ, ընտանեաց մէջ՝ աւելի շատ արտասուք այրիացելոց և որբացելոց. իսկ դու մեր սրբազան դիւցազն, դու ոչ այնպէս. այլ «Որպէս զբաջ նահատակ պատ» րաստեալ ի պատերազմ, կատարեցեր զընթացս քո արիաբար յազգացն Հարաւայնոյ. դասաւորեալ ընդ անմարմնականն, ով երանելի տէր վահան, Գողթնեացն իշխեցող»:

Երգոյն այս ետքի տունն, որ զհոգի վեհազինն դասաւորէ ընդ անմարմնականս, լռելու ատենը՝ կու յայտնէ անոր դասն այլ ի մէջ մարմնեղինացս. առաջին տանց վերջը՝ միշտ կրկնելով ո՛վ երանելի տէր վահանը, մէկ մէկ մակդիր կ'ընծայէ, կարգաւ բարձրացնելով կամ զատելով անոր աստիճանը. նախ ընտրեալ յԱստուհոյ, իբրև կոչուած ի նշանաւոր կեանս և ի գործ. ապա՝ ճառայ ֆրիստուսի, եռանդուն հաւատարմութեանն համար ի հաւատան ֆրիստուսի. յետոյ՝ Սիրոյ ֆրիստուսի, մասնաւոր ջանքով և բոլորովմբ նուիրմանն համար ի խաչակցութիւն փրկչին. ետքը՝ ընտրեալ յազատաց, իմացընելով անոր բարձր ցեղը՝ նաև ի մէջ ազնուաց երկրի, որոյ փառքն և փափկութիւնն արհամարհեց վասն սիրոյն ֆրիստուսի. իսկ հուսկ յե-

տոյ անոր սեփական պայազատութիւնն այլ նշանակելով՝ Գողթնեացն իշխեցող: Հայրենի դաւառին և տոհմին անուան ծայրը անսովոր ոճով և գրեթէ ներշնչմամբ մ՝ աւելցընելով Ն տառ մ՝ այլ, որ կարծես թէ մէկ կողմէն իր գեղեցիկ հայկական (վահան) անունէն կողոպտածին և տաճկացեալ վահապին վրէժը կու խնդրէ, մէկայլ կողմէն այլ գրեթէ անբացատրելի վսեմութիւն մը ոյժ մը աւելցընելով՝ արթնցընել կու տայ ի հայրենասէր սիրտս՝ զբոլոր հինաւուրց յիշատակ գինաւէտ, երգաւէտ և քաջաւէտն Գողթան: — Եւ այսպէս, եթէ Հօր Արտաւազդայ մը զրած վկայաբանութիւնը բաւական էր մեզի սիրելի և պաշտելի ընելու զվահան Գողթնացի, իր Շարակաւնն անհամեմատ առաւելութեամբ մ՝ այլ սրխալի և պարծելի կ'ընէ թէ գերգեալն և թէ գերգին: — Այսպիսի մէկ մը և ասոր նման մ՝ ունենալով՝ կրնաս և դու ով մթացեալ Հայաստան հայրենիք իմ, կրնաս չամաչել և չնախանձիլ ո՛ր և է ազգի դիմաց. կրնաս յայտմ մասին և գերաւիառ Յունաստանի մը հետ մրցիլ. և կրնաս թողուլ որ անոր համբաւեալ տասներորդ մուգայն՝ իր ծղերոյն ծղիւրը խածնելով՝ երթայ զահափիժի լեկադեան դարերէն վար, երբ յերևան ելնեն ի սարակո Սիւնեաց՝ մեր յիսուհ հոգի մուգայքն՝ Սահակադուխտ և Խոսրովիդուխտ: Ասոր հրաշահիւս շարականովը՝ կրնաս դու այլ փառաւորապէս քու հնապանծ երգերուդ վրայ զադրիլ և լռել, ով պանծալի բամբիւրն Գողթան. ասիկայ բաւական է քեզի անրուելի արձագանգ մ՝ ըլլալու, մեզի՝ մշտնջենաւոր միսիթարանք մը, և երկրաւոր անմահութիւն մը՝ անմահից դասակցեալ վահանայ Գողթնեացոյն:

Հ. Ղ. Մ. ԱԼԻՇԱՆ

1 Այսպէս կ'անուանէր Պղտուն զՍապփով: